«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
18.12.2025 թ.

1. Ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ։
   - ընդունել ի գիտություն,
2. Ծրագրային հավատարմագրման համատեքստում մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) փաթեթների լրամշակման վիճակի վերաբերյալ.
   - ընդունել ի գիտություն,
3. Գիտելիքների ստուգման, թեստերի թարմացման և համալսարանի ֆակուլտետների ամբիոններում ընթացիկ քննությունների կազմակերպման վիճակի վերաբերյալ.
   - բերված տվյալներն ընդունել ի գիտություն և հանձնարարել դեկաններին՝ ուսանողների գնահատման, քննությունների անցկացման ձևաչափը բարելավելու նպատակով ստորաբաժանումներում քննարկումներ կազմակերպել և առաջարկներ ներկայացնել գիտական խորհրդին։
4. Համալսարանի աշխատակիցների խրախուսման ձևերի, պարգևատրման և լրավճարների տրամադրման կարգի նախագծի վերաբերյալ.
   - համալսարանի աշխատակիցների խրախուսման կարգի նախագծի նախնական տարբերակի մշակումն ավարտել, իրավաբանական բաժնի կողմից վերջնական տեսքի բերել, հաստատել, որից հետո ուղարկել գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը։
5. Հեռակա ուսուցման համակարգում և Ագրոբիզնեսի դեպարտամենտում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի վերաբերյալ.
   - ընդունել ի գիտություն։
6. Առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքի և խնդիրների վերաբերյալ.
   - ընդունել ի գիտություն։
7. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների գնահատման և վերլուծության վերաբերյալ.
   - ընդունել ի գիտություն։

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. Մագիստրատուրայի կրթական աստիճանի սովորողներին կրթաթոշակ հատկացնելու հարցի վերաբերյալ
   - մագիստրատուրայի կրթական աստիճանում կրթաթոշակ հատկացնել թոշակի վճարման պահին մագիստրանտի կարգավիճակում գտնվող սովորողներին՝ չբաշխված դրամական միջոցները վերադարձնելով պետբյուջե։
2. ՀԱԱՀ հիմնադրման 95-ամյակի առթիվ համալսարանի վարչական, պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի, Սիսիանի, Վանաձորի մասնաճյուղերի բոլոր հիմնական աշխատողներին դեկտեմբեր ամսվա ընթացքում հետևյալ չափերով լրավճար վճարելու առաջարկի վերաբերյալ՝

   ա. Համալսարանում, Ա.Ե.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում, Վանաձորի մասնաճյուղում՝

- ✓ 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50%-ի չափով,
- ✓ 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 100% -ի չափով,

բ. Սիսիանի մասնաճյուղում, Հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանում՝

- ✓ 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 25%-ի չափով,
- ✓ 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50% -ի չափով:

- ընդունել առաջարկը և դեկտեմբեր ամսվա ընթացքում վճարել լրավճար՝ վերոնշյալ չափերով:

3. Ուսման վարձավճարների զեղչ տրամադրելու վերաբերյալ.
   - ուսման վարձերի զեղչ տրամադրել՝

     ա) «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի աշխատակից, Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի «Բուսաբուծություն, խաղողագործ., պտղաբ. և բույսերի պաշտպ.» մասնագիտության հայցորդ **Բիայնա Վարթանի Վահրամյանս Խոսրավիզադիին**՝ 50 տոկոս,

     բ) առկա ուսուցման համակարգի «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի **Մոնա Աղասու Մկրտչյանին**՝ 50 տոկոս,

     գ) Վանաձորի մասնաճյուղի «Անասնաբուժական և սանիտարական փորձաքննություն» մասնագիտության 5-րդ կուրսի ուսանողուհի **Մանյակ Մարտիրոսյանին**՝ յուրաքանչյուր կիսամյակ՝ 50 տոկոս:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ԶԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Ժ. ՄԽԵՅԱՆ